ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Հավելված N 1
Հայաստանի Հանրապետության
պետական եկամուտների կոմիտեի
նախագահի 2020 թվականի
մայիսի 27-ի N 477-Ն հրամանի

Օրինակելի ձև

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
Գործադիր մարմնի կողմից
21.04.2026 թ.

ՀԱՇԵՏՎՈՒԹՅՈՒՆ
««ՆՈԱ» ՖՈՒՏԲՈԼԱՅԻՆ ԱԿՈՒՄԲ»
հասարակական կազմակերպության 2025 թ. գործունեության մասին

1. Հասարակական կազմակերպության՝		
1.1 Լրիվ անվանումը		««ՆՈԱ» ՖՈՒՏԲՈԼԱՅԻՆ ԱԿՈՒՄԲ»
1.2 ՀՎՀՀ-ն		02660732
1.3 Գտնվելու վայրը		ԱՐՄԱՎԻՐ ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ԷՋՄԻԱԾԻՆ ՄԱՐԳԱՐԱ Փ. 12
1.4 Պետական գրանցման համարը		211.171.958171
1.5 Պետական գրանցման տարին, ամիսը, ամսաթիվը		2017-05-15
1.6 Հեռախոսը (այդ թվում՝ բջջային)		+(374)77335320
1.7 Պաշտոնական ինտերնետային կայքը		
1.8 Էլեկտրոնային փոստը		mkrtich.sukiasyan@fcnoah.club
2 Գործադիր մարմնի ղեկավարի՝		
Անունը	Ազգանունը	Պաշտոնը
ՎԱՐԴԳԵՍ	ՎԱՐԴԱՆՅԱՆ	Նախագահ
3 Կանոնադրությամբ սահմանված գործունեության առարկան և նպատակը		
ՀՀ և դրա սահմաններից դուրս զարգացնել և հանրայնացնել սպորտի տարբեր ձևեր		
ՀՀ և դրա սահմաներից դուրս նպաստել հատկապես ֆուտբոլի զարգացմանը և մասսայականացմանը		
իրականացնել մարզիչների, մարզիկների ինչպես նաև ֆուտբոլով հետաքրքրված անձանց մարզումներ, վերապատրաստումներ և այլ միջոցառումներ		
կազմակերպել և մասնակցել ներգնա և արտագնա ֆուտբոլային և այլ սպորտային մրցումներին, ինչպես նաև տարատեսակ սպորտային միջոցառումներ		
կազմակերպել սպորտային թեմաներով ժողովներ, կրթական բնույթի երկարաժամկետ և կարճաժամկետ դասընթացներ, սպորտային ճամբարներ, միջազգային հանդիպումներ,, ինչպես նաև մասնակցել նմանատիպ միջոցառումներին		
ներդնել պրոֆեսիոնալ մարզիչների և/կամ մարզիկների սպորտային կրթության արդյունավետ համակարգ		
նյութական և/կամ ոչ նյութական աջակցություն տրամադրել սպորտի ոլորտի վետերաններին և/կամ գործող մարզիկներին և/կամ մարզիչներին		
նյութապես աջակցել արտագնա և/կամ ներգնա մրցույթներին մասնակցող մարզիչներին և/կամ մարզիկներին՝ ապահովելով վերջիններիս կացության և/կամ ճանապարհային ծախսերը		
նյութպես օգնել սպորտային կրթություն իրականցնող շահույթ չհետապնդող կազմակերպություններին		
պաշտպանել մարզիկների և/կամ մարզիչների և/կամ սպորտային վետերանների սոցիալական շահերը և իրավունքները		
իրականցնել մարզական կրթության համակարգի բարեփոխումներ. կազմակերպել մանկապատանեկան մարզական և մշակութային ուսուցում, հիմնադրել և կառավարել մարզական հատկապես ֆուտբոլային խմբակներ		
պայքարել միջազգային մարզական կազմակերպությունների կողմից արգելված խթանիչների օգտագործման դեմ		
4 Հասարակական կազմակերպության՝		
4.1 Անդամների թիվը		2
4.2 Կամավորների թիվը		
5 Հաշվետու տարվա ընթացքում գումարված ժողովների քանակը		1

6. Իրականացված ծրագրեր՝

Հ/Հ	6.1 Ծրագրի անվանումը	6.2 Վայրը	6.3 Նպատակը	6.4 Կարգավիճակը
1	Ֆուբոլի զարգացում	ՀՀ Արմավիրի մարզ Մարգարա 12	Ֆուբոլի զարգացում	Ընթացքի մեջ

7. Հանրային միջոցներով իրականացված ծրագրեր՝

Digitally signed by SUKIASYAN MKRTICH 1101951153
Date: 2026.05.15 17:33:11 AMT

Հ/Հ	7.1 Ծրագրի անվանումը	7.2 Վայրը	7.3 Կարգավիճակը	7.4 Նպատակը	7.5 Հիմնական արդյունքները
1					

8. Տարեկան մուտքեր՝

8.1 Դրամական միջոցները	6,352,385,088
8.2 Գույքը	
Ընդամենը	6,352,385,088

9. Հանրային միջոցներ և ստացման աղբյուրներ

Հ/Հ	9.1 Դրամական միջոցները	9.3 Ստացման աղբյուրները
1		
Հ/Հ	9.2 Գույքը	
1		
Ընդամենը	0	

10. Օգտագործված դրամական միջոցները և/կամ շարժական/անշարժ գույքը՝

10.1 Դրամական միջոցները	6,441,345,165
10.2 Գույքը	

Հ/Հ	10.2.1 Տեսակը	10.2.2 Արժեքը
1		
Ընդամենը		6,441,345,165

11. Հանրային դրամական միջոցների և/կամ տրամադրված գույքի օգտագործումը, ծախսերը՝

11.1 Դրամական միջոցները	
11.2 Գույքը	

Հ/Հ	11.2.1 Տեսակը	11.2.2 Արժեքը
1		
Ընդամենը		0

12. Ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու՝

Հ/Հ	12.1 Տեսակը	12.2 Ստացված շահույթը	12.3 Շահույթի օգտագործումը
1	Գովազդային ծառայություններ	49,800,000.0	Աշխատավարձ, Հարկեր, կանխավճարներ ձեռքբերումների համար և կրեդիտորական պարտքեր
2	Տոմսերի վաճառքից	19,693,783.04	Աշխատավարձ, Հարկեր, կանխավճարներ ձեռքբերումների համար և կրեդիտորական պարտքեր
3	Հեռարձակումից հասույթ	19,623,625.0	Աշխատավարձ, Հարկեր, կանխավճարներ ձեռքբերումների համար և կրեդիտորական պարտքեր
4	Ֆուտբոլային պարագանաների վաճառքից հասույթ	11,770,784	Աշխատավարձ, Հարկեր, կանխավճարներ ձեռքբերումների համար և կրեդիտորական պարտքեր
5	Մարզումային փոխհատուցումից	1,621,528.9	Աշխատավարձ, Հարկեր, կանխավճարներ ձեռքբերումների համար և կրեդիտորական պարտքեր
6	Ֆուտբոլային խաղի անկացման համար անհրաժեշտ գույքի վարձակալություն	1,400,000.00	Աշխատավարձ, Հարկեր, կանխավճարներ ձեռքբերումների համար և կրեդիտորական պարտքեր
7	Ֆուտբոլային մարզումներից ստացվող եկամուտ	6,500,000.0	Աշխատավարձ, Հարկեր, կանխավճարներ ձեռքբերումների համար և կրեդիտորական պարտքեր
8	Տրանսպորտային միջոցի վաճառքից եկամուտ	4,365,000	Աշխատավարձ, Հարկեր, կանխավճարներ ձեռքբերումների համար և կրեդիտորական պարտքեր
9	Պայմանագրի խզումից գոյացող փոխհատուցումից եկամուտ	66,136,500	Աշխատավարձ, Հարկեր, կանխավճարներ ձեռքբերումների համար և կրեդիտորական պարտքեր
Ընդամենը		180,911,220.94	

Նշումներ

Կից ներկայացվում է՝

Աուդիտորի եզրակացություն՝ _____3_____ էջից

Էջերի քանակը

Գործադիր մարմնի ղեկավար _____

ստորագրություն, անունը, ազգանուն

Գլխավոր հաշվապահ _____
ստորագրություն, անունը, ազգանուն

Audit ARMENIA

ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ներկայացվում է ««Նոա» ֆուտբոլային ակումբ» Հասարակական Կազմակերպության Ղեկավարությանը

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել ««Նոա» ֆուտբոլային ակումբ» Հասարակական Կազմակերպության (այսուհետ՝ Կազմակերպություն) ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը՝ առ 31 դեկտեմբերի 2025թ., ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա համար շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին, զուտ ակտիվներում փոփոխությունների մասին, դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, և ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ՝ հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականության ամփոփը:
Մեր կարծիքով, կից ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով տալիս են Կազմակերպության 2025 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքի, զուտ ակտիվներում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի ճշմարիտ և իրական պատկերը՝ համաձայն Ֆինանսական Հաշվետվությունների Միջազգային Ստանդարտի (ՖՀՄՍ):

Կարծիքի հիմք

Աուդիտն անցկացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է այս եզրակացության՝ *Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար* բաժնում: Մենք անկախ ենք Կազմակերպությունից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի Միջազգային Ստանդարտների Խորհրդի կողմից հրապարակված Պրոֆեսիոնալ հաշվապահների էթիկայի կանոնագրքի (ՀԷՄՍԽ կանոնագիրք) և պահպանել ենք էթիկայի այլ պահանջները՝ համաձայն ՀԷՄՍԽ կանոնների և Հայաստանի Հանրապետությունում ֆինանսական հաշվետվությունների աուդիտին վերաբերող էթիկայի պահանջների:
Մենք համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

Ղեկավարության և կառավարման լիազոր անձանց պատասխանատվությունը

Ղեկավարությունը պատասխանատվություն է կրում ՖՀՄՍ-ների համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման համար, որոնք տալիս են ճշմարիտ և իրական պատկեր, և այնպիսի ներքին հսկողության համար, որն ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը ապահովելու համար:
Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս՝ ղեկավարությունը պատասխանատու է Կազմակերպության անընդհատ գործելու կարողության գնահատման համար՝ անհրաժեշտության դեպքում բացահայտելով անընդհատությանը վերաբերող հարցերը, ինչպես նաև հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքը կիրառելու համար, եթե ղեկավարությունը չունի Կազմակերպությունը լուծարելու կամ Կազմակերպության գործունեությունը դադարեցնելու մտադրություն, կամ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման լիազոր անձինք պատասխանատու են ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից, անկախ դրանց խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորական եզրակացություն:

Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ սխալի կամ խարդախության արդյունքում, և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք առանձին կամ միասին վերցրած, կազդեն ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:
ԱՄՍ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն՝

- բացահայտում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավականաչափ և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության համակարգի չարաշահում.
- ձեռք ենք բերում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին պատկերացում՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, և ոչ թե Կազմակերպության ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար.
- գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և կից բացահայտումների խելամտությունը.
- եզրահանգում ենք ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ, և հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա՝ գնահատում ենք՝ արդյոք առկա է էական անորոշություն դեպքերի կամ իրավիճակների վերաբերյալ, որոնք կարող են նշանակալի կասկած հարուցել Կազմակերպության անընդհատ գործելու կարողության վրա: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորական եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը:
  Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Սակայն, ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Կազմակերպությանը դադարեցնել անընդհատության հիմունքի կիրառումը:
- գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ բացահայտումները՝ ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների և դեպքերի ճշմարիտ ներկայացումը:

Կառավարման լիազոր անձանց, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտի առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

«Աուդիտ Արմենիա» ՓԲԸ
16 մարտի, 2026թ.
Ք. Երևան, Վաղարշյան 12

Աննա Ավետիսյան

Տնօրեն-Բաժնետեր
Աուդիտի ղեկավար

«ԱՈՒԴԻՏ ԱՐՄԵՆԻԱ»
«AUDIT ARMENIA»
«АУДИТ АРМЕНИЯ»
01569467

Signer: ՀՀ ՊԵԿ
Date: 15.05.2026 17:32